

Ատոմ Շ.Մարգարյան
Կրկ. գիտ. քեկնածու

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համակարգային հիվանդության ախտաճանաչումները

1. Կոռուպցիայի ընկալումը ժամանակակից աշխարհում*

Ամենևին էլ պատահական չէ այն փաստը, որ պետական իշխանության ներկայացուցիչների կողմից իրենց լիազորությունների չարաշահման և դրա միջոցով անձնական եկամտի ու հարստության կուտակման երևույթն իր արմատներով ձգվում է հազարամյակների խորքը:

Կոռուպցիան՝ որպես հասարակայնորեն խիստ վտանգավոր ու հասարակության առաջընթացը կասեցնող երևույթ, իր տարաբնույթ մեկնաբանություններն ունի, որոնք փորձում են բացահայտել նրա բովանդակությունը՝ քաղաքական, իրավական, տնտեսական և բարոյահոգեբանական տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, ի մի բերելով կոռուպցիայի գանազան ընկալումները, դրանք կարելի է ներկայացնել մի քանի հիմնական խմբերով:

Առաջին մոտեցմամբ կոռուպցիան կարելի է դիտարկել որպես շեղում հասարակության կողմից ընդունված համընդհանուր նորմերից, համամարդկային բարոյական սկզբունքներից: Ըստ այդմ՝ կոռուպցիան պետական պաշտոնյաների այնպիսի վարքագիծ է, որի դեպքում նրանց պաշտոնեական լիազորությունները ծառայեցվում են անձնական շահերին, ինչը դրսևորվում է պաշտոնական դիրքի չարաշահման տեսքով: Այս դեպքում կոռուպցիան առավելապես վարչական դրսևորում է ստանում, երբ որոշակի վճարի դիմաց ինչ-որ «հաճախորդի» օգտին պաշտոնյաները որոշումներ են կայացնում՝ ոտնահարելով օրենքներն ու պաշտոնապես սահմանված կանոնները: Այսօրինակ մոտեցման համաձայն՝ կոռուպցիոն փոխհարաբերությունները երկկողմանի բնույթ են ստանում «դու՝ ինձ, ես՝ քեզ» սկզբունքով¹:

Երկրորդ տեսակետի համաձայն՝ կոռուպցիան հարաբերությունների որոշակի ձև է, որը հիմնականում դրսևորվում է կաշառաշորթման տեսքով, իսկ երևույթն իր ամբողջության մեջ ձևավորում է, այսպես ասած՝ կոռուպցիոն ծառայությունների շուկա, որտեղ «առևտուրը» իրականացվում է միջնորդների՝ պետական պաշտոնյաների անմիջական ջանքերով: Կոռուպցիան այս պայմաններում կարող է խմբային, կլանային, կորպորատիվ դրսևորումներ ունենալ, ինչը շատ հաճախ այն վեր է ածում համակարգային գործոնի (կամ՝ արատի): Նորբեյյան

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.06.2010:
1 Տե՛ս Россия и коррупция: кто кого. - Региональный общественный фонд « Информатика для демократии» (Фонд ИНДЕМ). Москва, 1998 (http://www.anti-corr.ru/an_study.shtml)

Բ (Ը) ԳԱՐԻԵ, ՔԻՎ 2(30) ԿԱՐԿԻ-ԽՈՒՆԻՍ 2010

ՎԵՄ համահայկական հանդես

մրցանակակիր Հարրի Բեքքերի մոտեցման համաձայն, կոռուպցիան մեծ ռիսկ ենթադրող այնպիսի տնտեսական գործունեության տեսակ է, որն ուղեկցվում է պաշտոնյաների կողմից իրենց լիազորությունների չարաշահմամբ ու ենթադրում է որոշակի քրեական պատժամիջոցների գործադրում²:

Նեղ իմաստով կոռուպցիան նշանակում է պաշտոնատար անձի կողմից լիազորությունների չարաշահում՝ անձնական եկամտի ստացման նպատակով: Կոռուպցիայի բնորոշ գիծը պաշտոնատար անձի և հասարակության շահերի բախումն է, ինչը կարող է դրսևորվել կաշառակերության, դրամաշորթության, պետական և անձնական միջոցների հափշտակության, հովանավորչության, որոշակի վճարների դիմաց անօրինական արտոնությունների տրամադրման և բազմաթիվ այլ ձևերով: Համաձայն կոռուպցիայի խոշոր տեսաբաններից մեկի՝ Ս.Ռոուզ-Աքերմանի տեսակետի, կոռուպցիան պետք է գնահատել լայն իմաստով՝ ոչ միայն միակողմանի շորթման, այլ նաև երկկողմանի փոխշահավետ գործարքի տեսքով³: Այս տեսակետը, կարելի է ասել, այսօր պաշտոնապես ընդունվում է միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի փորձագետների գնահատականը կոռուպցիային այսպիսին է. «կոռուպցիան կաշառակերությունն է, լիազորություն ունեցող պաշտոնատար անձի լիազորությունների չարաշահումը, ընդ որում, այդպիսի վարքագիծը ուղղված է իր կամ երրորդ անձի օգտին ցանկացած անօրինական եկամուտների կամ առավելությունների ստացմանը»⁴:

Կոռուպցիայի բնույթի վերաբերյալ գոյություն ունեն նաև այլ մոտեցումներ: Մասնավորապես, կարելի է հանդիպել «ինստիտուցիոնալ կոռուպցիա» և «քաղաքական կոռուպցիա» եզրերին: Ինստիտուցիոնալ կոռուպցիան, ըստ այդմ, կոռուպցիոն վարքագծի այնպիսի ձև է, որն օգուտներ է ապահովում տարատեսակ ինստիտուտների գործողությունից, օրինակ՝ հասարակական կամ քաղաքական կազմակերպությունների մեջ ներգրավվածությունից⁵: Կոռուպցիայի խնդրով զբաղվող տեսաբանների մի մասն էլ առաջարկում է քաղաքական կոռուպցիան սահմանազատել վարչական կոռուպցիայից⁶:

Կոռուպցիան նույնքան հին պատմություն ունի, որքան հասարակությունն՝ ինքը: Կոռուպցիայի սաղմերը ի հայտ են եկել դեռևս նախնադարյան համայնքներում, երբ համայնքի շարքային անդամը այս կամ այն արտոնությունը ստանալու նպատակով որոշակի «վերաբերմունք» էր ցույց տալիս համայնքի առաջնորդին կամ քրմին: Պետական կազմավորումների ձևավորմանը և պետական բյուրոկրատական կառույցների առաջացմանը զուգահեռ, կոռուպցիան համակարգված տեսք ստացավ: Պետական պաշտոնյաներն իրենց լեզու եկամուտները ավելացնելու նպատակով սկսեցին չարաշահել պաշտոնական լիազորությունները: Այդուհանդերձ, մինչև 18-19-րդ դարերը կոռուպցիան իր տարատեսակ դրսևորումներով սահմանափակ ծավալներ ուներ, քանի որ պետական

2 St'u Becker G. Crime and Punishment: An Economic Approach // Journal of Political Economy. 1968. N 76. p. 82:

3 St'u C. Բուշ-Աքերման. Коррупция и государство: причины, следствия и реформы. М.:Логос, 2003. с. 46.

4 St'u Швец Е. В. Некоторые аспекты международно-правового сотрудничества- членов Совета Европы в области борьбы с коррупцией. «Журнал российского права». 2000. N.7. с. 37.

5 St'u Тимофеев Л.М. Институциональная коррупция. М.:РГГУ. 2000. с. 64.

6 St'u Tanzi V. Corruption, Governmental Activities and Markets//IMF Working Papers. No 94/99/ Washington, 1994.

կազմավորումներն իրենց բնույթով միապետական էին, պետական կառավարման բյուրոկրատական բուրգը խիստ վերահսկելի էր, իսկ իրենց լիազորությունները չարաշահող պաշտոնյաների պատիժները՝ չափազանց խիստ: Այդ պատճառով կոռուպցիայի դրսևորումները մեծ ազդեցություն չունեին միահեծան վարչակարգերի վրա: Թերևս, այս տեսակետից որոշակի բացառություն էր կազմում դատական համակարգը, երբ պետության անունից հանդես եկող դատավորները, չարաշահելով իրենց պաշտոնական դիրքը, կարող էին դատավճիռներ կայացնել ոչ թե օրենքի պահանջից ելնելով, այլ նրանց օգտին, ուլքեր ավելի «վճարունակ» էին կամ ուժեղ: Դատավորների ծախվածությունը՝ որպես կոռուպցիայի դրսևորման հիմնական ձև, ինչպես նաև դրա դեմ բոլոր միջոցներով պայքարի խնդիրը ժամանակին համարվում էր առաջադեմ հասարակությունների առաջնահերթ պահանջներից մեկը:

19-20-րդ դարերի ընթացքում Արևմտյան Եվրոպայում ձևավորված ժողովրդավարական պետությունների օրենսդրություններում հակակոռուպցիոն մեխանիզմները սկսեցին նշանակալի դեր խաղալ: Դրան զուգահեռ, արևմտյան հասարակություններում ձևավորվեցին կոռուպցիայի դեմ անհանդուրժողակամության հասարակական մեխանիզմներ, ինչը այդ երևույթը դրեց միանգամայն տանելի ու սահմանափակ շրջանակների մեջ: Ընդ որում, հակակոռուպցիոն մեխանիզմները դարձան Արևմուտքի ժողովրդավարական հասարակությունների սահմանադրական համակարգերի անբաժանելի բաղադրիչները: Ավելին, այդ հասարակությունների ձևավորած քաղաքական իշխանությունների կենսագործունեության հիմնարար սկզբունքները իրենց բովանդակությամբ հակակոռուպցիոն բնույթի էին: Դա վերաբերում էր հատկապես իշխանության բարձրագույն մարմիններին՝ սկսած պետության գլխից, վերջացրած դատական ու արդարադատության մարմիններով: Հակակոռուպցիոն բովանդակություն ունեին նաև քաղաքական կառավարման մեխանիզմները, որոնք, որպես կանոն, հիմնված էին (և են) իշխանության տարբեր քեների փոխադարձ զսպումների ու հակակշիռների հավասարակշռված մեխանիզմների վրա: Օրինակ, դեռևս 1787 թվականին ընդունված ԱՄՆ Սահմանադրությամբ երկրի նախագահին անվստահություն (իմպիչմենթ) հայտարարելու երկու հիմքերից մեկը վերաբերում է կաշառք վերցնելու մեղադրանքին: 20-րդ դարում զարգացած երկրներում կոռուպցիայի ընդլայնման ու տարածման հիմնական ռիսկերը կապված էին թերևս քաղաքական վերնախավի (կամ նրա առանձին շրջանակների) ու խոշոր բիզնեսի սերտաճման սպառնալիքների հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գլոբալացման միտումների խորացումը և միջազգային ֆինանսական կառույցների (Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ և այլն) գործունեության ծավալումը ողջ աշխարհով մեկ, ինչպես նաև անդրազգային կորպորացիաների տարածումը մայր երկրների սահմաններից դուրս, պարարտ հող ստեղծեցին կոռուպցիայի միջազգային շրթաների ընդլայնման ու զարգացման համար: Դրան նպաստեց անօրինական եկամուտների և փողերի լվացման սովորային ու քողարկված ֆինանսական սխեմաների և նորագույն մեխանիզմների տարածումը:

Կոռուպցիայի հիերարխիկ, խիստ կանոնակարգված ու յուրօրինակ համակարգ էր ձևավորվել նախկին սոցիալիստական երկրներում, հատկապես նախկին ԽՍՀՄ-ում: Հայտնի է, որ ԽՍՀՄ պայմաններում կոռուպցիան հիմնականում

այսպես ասած՝ «ոչ դրամական» հանդերձանք ուներ, այսինքն՝ դրսևորվում էր գլխավորապես բյուրոկրատական բուրգի կարգավիճակով պայմանավորված արտոնությունների տեսքով: Որքան մարդը բարձր կարգավիճակ ուներ կուսակցական-նոմենկլատուրային սանդուղքի աստիճաններին, այնքան ավելի մեծ ծավալի արտոնություններից էր օգտվում: Դա թեև դրամական համարժեք ուներ, սակայն իրականության մեջ հանդես էր գալիս ոչ թե դրամական, այլ կոնկրետ նյութական բարիքների ու ծառայությունների որոշակի հավաքածուից օգտվելու արտոնության տեսքով:

Այդուհանդերձ, բյուրոկրատական սանդուղքի խիստ կանոնակարգված ու միահեծան-կուսակցական վերահսկողության պայմաններում կոռուպցիայի այդօրինակ աստիճանակարգը (հիերարխիան) սահմանափակ գործողության շրջանակի մեջ էր, քանի որ կուսակցական բուրգը խստորեն վերահսկվում էր իր գազաթից: Եվ որքան կոռուպացված էին ԽՍՀՄ քաղաքական ու տնտեսական համակարգերը, նույնքան արժեզրկված էին բարոյական նորմերը: Հատկապես ԽՍՀՄ գոյության վերջին տասնամյակում կոռուպցիան այն աստիճան էր ծավալվել ու կենտրոնացել, որ սնանկացրել էր բոլոր գաղափարախոսական կարգախոսներն ու թեզերը: Ավելին՝ ամբողջապես սնանկ տնտեսական ու ռազմաքաղաքական համակարգերի կազմալուծման փաստը արժեզրկելով «կոմունիստական հեռանկարը», դարձել էր կոռուպցիայի հզոր սնուցիչ:

2. Կոռուպցիայի խորհրդային ժառանգության կերպավորումը

Վարչահրամայական համակարգի ապամոնտաժման ու այսպես կոչված՝ ազատական բարեփոխումների ժամանակահատվածում արդեն իսկ գոյություն ունեցող կոռուպցիան յուրացրեց խորհրդային բյուրոկրատական բուրգի հիմնական «որակները» և դրանք «հարստացրեց» դրամական կոռուպցիայի մեխանիզմներով: Վարչակենտրոնացված համակարգի ապամոնտաժումը և արտաքուստ միայն՝ ժողովրդավարական համակարգի ներդրումը, ըստ էության նշանակում էր համընդհանուր հովանավորչության (պատրոնաժի) ու աստիճանակարգված արտոնությունների համակարգի փոխարինում, ավելի ճիշտ՝ համալրում, դրամական կոռուպցիայի տարաբնույթ մեխանիզմներով: Պետական խոշոր ձեռնարկությունների մասնավորեցումը, միջազգային դոնոր կառույցների ու դոնոր երկրների տրամադրած հսկայածավալ դրամական նվիրատվությունների ու վարկերի ստացումը, բիզնես գործունեություն ծավալելու և այդօրինակ այլ թույլտվությունների տրամադրման լիազորությունների ստանձնումը և այլ «սահմանադրական իրավասությունների» ձեռքբերումը պետական բյուրոկրատիայի հսկայական բանակին չարաշահումների, կաշառաշորքման, թալանի նորանոր հնարավորություններ էր բացում:

Ավելին, բռնապետական քաղաքական մշակույթից անցումը արտաքուստ միայն՝ ընտրության միջոցով իշխանության վերարտադրության մեխանիզմներին, որոնք, ըստ սահմանման, պետք է ապահովեին իշխանությունների օրինականությունն ու հաշվետու լինելը, իրականում ձևավորեց նոր՝ նախկինում անծանոթ, քաղաքական կոռուպցիայի պարադիգմը, ինչը իրենով նշանավորեց տնտեսական ու ֆինանսական ռեսուրսների մի զգալի մասի դուրսմղումը տնտեսական շրջանառությունից ու նրանց ուղղորդումը՝ դեպի կոռուպցիայի այս նոր տարատե-

սակի աներևակայելիորեն ընդարձակ տիրույթները: Թերևս, խորհրդային ամբողջատիրական վարչակարգի փլուզմանը հաջորդած բյուրոկրատական մասնավորեցման մեխանիզմները այն պարարտ հողն էին, որոնք նախկին ԽՍՀՄ պետական միավորներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, ձևավորեցին ծայրահեղորեն անարդյունավետ, ժամանակի ընթացքում ինքն իրեն խժռող տնտեսական համակարգ, որը զուրկ է նորամուծական (ինովացիոն) ինքնակազմակերպման, ինքնավերարտադրության և արդիականացման ներուժից:

Հաճախ կարծիք է հնչում, թե անցկացված հախուռն բարեփոխումները ունեին ազատական բովանդակություն, որ իբր դրանք իրենց բնույթով շուկայական բարեփոխումներ էին: Սակայն իրականությունն այլ է. բարեփոխումները բյուրոկրատական բովանդակություն ունեին, որոնց նպատակը պետական սեփականության շահադիտական վերաբաշխում-վերաբաժանումն էր հենց իր՝ պետական բյուրոկրատիայի օգտին: Այնինչ, եթե բարեփոխումները իրականացվեին շուկայական սկզբունքներով, ապա դրանց գլխավոր չափանիշը կլիներ արդյունավետությունը, այսինքն՝ սեփականությունը բաժին կհասներ արդյունավետ սեփականատիրոջը, որը շահագրգռված կլիներ դրա զարգացման մեջ, առաջին հերթին՝ ներդրումների միջոցով հնացած տեխնոլոգիաները արդիականացնելու և ազգային տնտեսության մրցունակության մակարդակը բարձրացնելու նպատակով: Այդ պատճառով որքան Հայաստանում ծավալվում էին մասնավորեցման գործընթացները, այնքան ավելի մեծ ծավալներ և ընդգրկում էր ստանում կոռուպցիան:

Պետական բյուրոկրատիան, ուժային և իրավապահ համակարգերի բարձրաստիճան ու միջին պաշտոնյաները, քաղաքական նորելուկ վերնախավի պարագլուխները այս կամ այն կերպ ներգրավված էին (և են) այդ գործընթացների մեջ, որոնց նպատակը կայծակնային գերշահույթի ստացումն էր: Ավելին՝ պետական-իշխանական բուրգի սանդուղքներով վեր բարձրանալը դիտվում էր իբրև հարստանալու հիմնական ձև, իսկ եթե այդ հարստությունը որոշակի ծավալով արդեն կուտակված էր, ապա պետական կառավարման համակարգում, այդ թվում՝ խորհրդարանում որոշակի տեղ, մանդատ զբաղեցնելը դիտվում էր որպես սեփական հարստությունը ունձգությունից պաշտպանելու հիմնական կռվան, քանզի ոչ մի երաշխիք չկար, որ իշխանափոխությունից հետո այն իրենից չեն խլի:

Այս պայմաններում կոռուպցիան Հայաստանում ինստիտուցիոնալացվեց որակապես նոր մակարդակի վրա, քանզի տեղի ունեցավ տվյալ երևույթի տարօրինակ կերպափոխումը: Ազատական բարեփոխումներն իբրև նպատակ հռչակած իշխանության և սեփականության տարանջատման-սահմանազատման փոխարեն տեղի ունեցավ իշխանության և խոշոր կապիտալի միավորում-սերտաճում նոր, ավելի ամուր, մասնավոր-շուկայական հիմքի վրա: Էական չէ, որ նախկին խորհրդային միաձույլ կուսակցական-պետական բյուրոկրատիայի տեղը այժմ արդեն Հայաստանում զբաղեցրել է խոշոր սեփականություն ունեցող «օլիգարխիան», որը «գնել-սեփականել» է պետությունը: Շուկայական-մասնավոր փոխանակային հարաբերությունները տարածելով ընտրական գործընթացների վրա, դրանով իսկ նա ապահովել է իր լայն մասնակցությունը, եթե ոչ՝ վճռորոշ դերակատարությունը պետական կառավարման ոլորտում: Այս պայմաններում խոշոր կապիտալը, որը գերազանցապես անօրինական ծագում ունի, սկսում է որոշիչ դերակատարություն ունենալ պետության և հասարակության

կենսագործունեության համար կարևորագույն որոշումների ընդունման հարցում և դրանք հարմարեցնել բացառապես սեփական շահերին: Հայաստանում առկա այս բնորոշ հայտնի է որպես «պետության զավթման» մոդել⁷:

Թերևս, կարելի է պնդել, որ խոշոր կապիտալի այսօրինակ վարքագծի հիմքում ընկած է խորհրդային ժամանակներից եկող ավանդույթը: Գաղտնիք չէ, որ ԽՍՀՄ պայմաններում մարդկանց միջև մրցակցության գլխավոր ասպարեզը ոչ թե հորիզոնական-շուկայական հարաբերությունն էր ու ազատ մրցակցությունը՝ հարստության կուտակման և ավելի բարձր կենսամակարդակի հասնելու համար, այլ կուսակցական-պետական աստիճանակարգում որքան հնարավոր է բարձր տեղ զբաղեցնելու ձգտումը: Եթե խորհրդային համակարգում բարձրաստիճան կուսակցական բյուրոկրատիան վերահսկում և կառավարում էր կոռուպցիայի բուրգը և այդ կերպ սահմանափակումներ դնում ավելի ստորին մակարդակներում նրա անթույլատրելի տարածման ճանապարհին, ապա նոր պայմաններում նույն կերպ գործող պետական մեքենան զգալի ճեղքվածքներ տվեց: Քանզի ԽՍՀՄ միջին կամ համեմատաբար ցածր մակարդակի պաշտոնյան հստակ գիտեր, թե ինչ է իրենից պահանջվում վերևից ու որքան է կոռուպցիայի իր «քվոտան», իսկ ահա նոր պայմաններում ստորին ու միջին մակարդակի բյուրոկրատիան դարձավ անվերահսկելի՝ քողարկվելով կեղծ-ժողովրդավարական այնպիսի մեխանիզմներով, ինչպիսիք են տեղական ինքնակառավարման ու համատիրությունների կազմավորման նոր ընթացակարգերը, որոնք պարզապես վեր են ածվել թաղային հեղինակությունների ու քրեական աշխարհի տեղական ղեկավարների շահերի բախման ասպարեզի:

Այսպիսով, շուկայի և ազատ մրցակցության հիմնատարների ներմուծումը հետխորհրդային երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, ոչ թե նվազեցրեց կոռուպցիան, այլ մի բան էլ ավելացրեց: Եվ այս տեսանկյունից կոռուպցիայի պատճառը ոչ թե ազատ մրցակցությունն է, այլ այն կոնկրետ եղանակներն ու մեթոդները, որոնք բարեփոխումների «նարտարագետներն» ու քաղաքական պատասխանատուները ներդրեցին, իրականում՝ բացառելով մրցակցությունը, պետական քաղաքական համակարգում արժանի տեղ զբաղեցնելու բնականոն մեխանիզմների գործողությունը: Դրա փոխարեն առաջ մղվեցին հատվածական-կլանային, ընտանեկան-խմբակային շահերը, որոնք հասարակության և տնտեսության մոդելավորման գործընթացները հունավորեցին դեպի ամբողջատիրական հասարակարգերին ու վարչակարգերին յուրահատուկ իրողությունները: Այլապես, անհասկանալի է, թե ինչու՞ են Հայաստանում ընտրական գործընթացներն այլասերվում այն աստիճան, որ ամենաչնչին վստահություն չեն ստեղծում ընտրովի մարմինների օրինականության (լեգիտիմության) նկատմամբ, իսկ ազատ տնտեսական մրցակցության փոխարեն արմատավորվում են վայրի մենաշնորհների թելադրանքի, քվոտավորման, լիմիտավորման անընդունելի մեխանիզմները: Այս համապատկերում պաշտոնական դիրքի չարաշահումը, գանձագողությունը, իրավական համակարգերի կոռումպացվածությունը և սերտաճումը՝ կազմակերպված հանցավորության համակարգի հետ, փաստորեն համատարած բնույթ են ստանում:

7 St u Seize the State, Seize the Day: State Capture, Corruption, and Influence in Transition Economies (World Bank Policy Research Working Paper 2444) September 2000. – J. Hellman, G. Jones, and D. Kaufmann. p 18.

Նախկին կենտրոնացված-պլանային համակարգի փլուզումը և կազմալուծումը կաթվածահար արեցին նաև համընդհանուր զբաղվածության խորհրդային համակարգը: Եթե նախկինում աշխատանք գտնելն ու տեղավորվելը պետության կողմից երաշխավորված և, ըստ էության, պլանային-պարտադրական բնույթ ունեցող ու նվազագույն եկամուտ ապահովող ասպարեզ էր, ապա նոր պայմաններում աշխատանք ու հանրօգուտ զբաղմունք գտնելը յուրաքանչյուր մարդու խնդիրը դարձավ: Տնտեսական համակարգերի փլուզումը հանգեցրեց զանգվածային գործազրկության, տնտեսական արտագաղթի, աղքատացման ու սոցիալական հիմնախնդիրների աննախադեպ սրման: Անորոշությունը, կախվածությունը նորահայտ մեծահարուստ-գործատուներից ու հետևաբար՝ աշխատանքը կորցնելու վախը, մարդկանց դարձրին հարմարվող, հյու-հնազանդ կամակատարներ: Այս երևույթը Հայաստանում տարածվեց նաև պետական ծառայողների նորաստեղծ ինստիտուտի վրա: Նրանցից շատերը հանուն իրենց աշխատանքը պահելու պատրաստ էին (և են) ներքաշվել քաղաքական գործընթացների մեջ ու ամեն ինչ անել, որպեսզի հերթական ընտրություններում՝ զանգվածային ընտրակեղծիքներով անպայման վերարտադրվի գործող իշխանության թեկնածուն:

Գների ազատականացումը, պետական ահռելի ռեսուրսների և գույքի անձրագիր ու անարդյունավետ մասնավորեցումը ժողովրդավարական հասարակարգի կառուցման ժողովրդահաճո լուզումներով իշխանության եկած նորելուկ ընտրախավերի համար աննախադեպ հնարավորություններ ստեղծեցին՝ սեփականության յուրացման ու հարստության ուժային-խմբակային վերաբաշխման համար: Շատ երկրներում, որտեղ հանգամանքների բերումով զգալի դերակատարություն ունեցավ բարձրաստիճան ռազմաոստիկանական բյուրոկրատիան, այս գործընթացի անբաժանելի մաս դարձավ բռնությունը՝ սեփականության և բիզնեսի ոլորտի կամայական վերաբաշխումը: Նախկին խորհրդային հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանում, ուժային համակարգերի առանցքային դեմքերի համար յուրահատուկ կանոն դարձավ սեփական բիզնես կառույցների ձևավորումը և իրենց պաշտոնական դիրքը չարաշահելով՝ հսկայական ստվերային եկամուտների ստացում-յուրացումը: Նման գործունեության համար որպես նախասկզբնական կապիտալ է ծառայել (և այժմ էլ ծառայում է) աննախադեպ կաշառակերությունը: Բանակի, ոստիկանության, դատախազության, ուժային այլ կառույցների, դատական ատյանների տարաբնույթ պաշտոնյաների կողմից իրենց լիազորությունների չարաշահումը Հայաստանում տարածված երևույթ է: Կոռուպցիոն բնույթի այսօրինակ «ծառայությունների» մատուցումը, ասենք՝ մեկին բանակային ծառայությունից ապօրինի ազատելու, երկրորդի կատարած հանցանքը կոծկելու-պարտակելու, երրորդի պատժաչափը հանիքավի նվազեցնելու և այլ գործողությունների տեսքով, ապահովում է վերը նշված համակարգերի կոռումպացված պաշտոնյաների «կեղտոտ» կապիտալի շարունակական համալրումը: Շատ հաճախ ուժային կառույցների ղեկավար պաշտոնյաները իրենց բիզնես-շահերը կարողանում են քողարկել նրբահնար միջոցներով, իրենց ապօրինի մասնակցությունը բիզնես կառույցների գործունեությանն իրականացնելով դրածոների ու զանազան «սլաքավարների» օժանդակությամբ:

3. Կոռուպցիան և Հայաստանի քաղաքական համակարգը

Իշխանության գալով հասարակության ու պետության ժողովրդավարացման, արդեն «նախկին» դարձած բռանապետական քաղաքական մշակույթը վերացնելու և դրա փոխարեն մարդու միջազգայնորեն ընդունված իրավունքների ու ազատությունների համակարգեր արմատավորելու կարգախոսներով, նորելուկ վերնախավերը, որոնք մասամբ սերում էին մտավորականությունից, մասամբ՝ խորհրդային կուսակցական-տնտեսական նումենկլատուրայից, մասամբ էլ՝ ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի գործակալական ցանցից, իրականության մեջ փորձեցին ձևավորել այնպիսի ինստիտուտներ ու իրավաքաղաքական ընթացակարգեր, որպեսզի իրենց իշխանությունը դառնա շարունակական, ամրապնդվի տնտեսական բազայով, իսկ հնարավորության սահմաններում նաև՝ ծայրահեղական-ամբոխավարական կարգախոսներով: Այս նպատակով մշակվեցին ու գործողության մեջ դրվեցին իրավաօրենսդրական ու վարքագծային այնպիսի մեխանիզմներ, որոնք, հակառակ ձևական-ժողովրդահաճո հայտարարություններին, պետք է բացառեին, մի կողմից՝ ազատ, արդար, թափանցիկ ընտրությունների անցկացումը, մյուս կողմից՝ իրական ընդդիմություն հանդիսացող քաղաքական ուժերի ու գործիչների հայտնվելը շատ թե քիչ լուրջ կշիռ ունեցող ընտրովի պաշտոններում:

Ռազմաքաղաքական, տնտեսական, սոցիալական բարդ իրավիճակում հայտնված Հայաստանի իշխող վերնախավի համար նշված անբարենպաստ գործոնների առկայությունը ընդամենը պատրվակ էր՝ ժողովրդավարական ընտրությունների մեխանիզմը արմատախիլ անելու ու նախկին դաշտային հրամանատարների և ուժային-իրավապահ կառույցների միջոցով ժողովրդավարական զարգացման հեռանկարը թաղելու համար: Եվ այն զարգացումները, որոնք տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականների կեսերից ի վեր և շարունակվում են առ այսօր, իրականում երկրի զարգացման ժողովրդավարական ուղու և մարդու, իսկ ամբողջության մեջ՝ ազգի իրավունքների շարունակական բռնադատման պատմություն են:

Փաստը մնում է փաստ, և հայաստանյան օրենսդիր կառույցի ոչ երկար պատմությունը վկայում է, որ յուրաքանչյուր հաջորդ խորհրդարան իր որակական, մասնագիտական, բարոյականային կարողություններով, որպես կանոն, զիջում է նախորդին՝ աստիճանաբար դառնալով լուսանցքային-ածացյալ քաղաքական գործոն, երբ թվում է, ճիշտ հակառակը պետք է լիներ: Ավելին, ոչ մի երաշխիք չկա, որ հաջորդ խորհրդարանն իր կազմով և օրենսդրական ներուժով ավելի լավն է լինելու, քան ներկայումս գործողը: Այն ակնկալիքը, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության թևերի սահմանադրական տարանջատումը կարող է երկրում օրենքների և օրինականության երաշխիք հանդիսանալ, բնավ չարդարացավ:

Իրականությունն այն է, որ Ազգային ժողով կոչվածը տարաբնույթ կոռուպցիոն շահերի փոխներգործության արդյունքում դարձել է գործադիր իշխանության ուղղահայց բուրգի հլու-հնազանդ կամակատարը: Այս ամենի հիմնական պատճառն այն է, որ շարունակվում է արհամարհվել գլխավորը՝ ժողովրդի հավաքական կամքը, օրինական, հաշվետու և պատասխանատու իշխանություն ձևավորելու նրա բնական ու անօտարելի իրավունքը: Հայաս-

տանում ձևավորված քաղաքական կոռուպցիայի մեխանիզմը, ըստ էության, բացառում է քաղաքակիրթ աշխարհին բնորոշ եղանակներով օրենսդիր կառույցի ձևավորումը: Իսկ հետևանքները ավելի քան ակնհայտ են. օրենսդիր իշխանության մեջ հայտնվում են մարդկային ու մասնագիտական ցածր հատկանիշներ, քարոյական նվաստ որակներ, հաճախ՝ քրեական անցյալ ու ներկա ունեցող մարդիկ, որոնց համար «օրինաստեղծ գործունեությունը» սոսկ միջոց է իրենց անձն ու բիզնեսը անձեռնմխելի պահելու և հավելյալ քաղաքական ու ֆինանսական շահաբաժիններ կորզելու համար:

Ի տարբերություն զարգացած ժողովրդավարական պետությունների, որտեղ լրբբիստական շահերի հիմնական թիրախը օրենսդիր կառույցներն են, անցումային երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, լրբբիզմի հիմնական ոլորտը գործադիր իշխանությունն է: Եվ սա բնական է, քանի որ մեր նման երկրներում այս կառույցն է փաստացի տնօրինում, բաշխում և վերաբաշխում բոլոր այն բարիքներն ու ծառայությունները, որոնք ենթակա չեն շուկայական գործիքների միջոցով փոխանակության կամ բաշխման: Մյուս կողմից՝ կայացած ժողովրդավարական համակարգերում քաղաքական (օրենսդիր) իշխանության պարբերական նորացումն ուղեկցվում է գործադիր իշխանության հարաբերական անփոփոխությամբ-կայունությամբ: Սեզանում, սակայն, գործընթացները ճիշտ հակառակ տրամաբանությունն ունեն. անկախության երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում հինգերորդ խորհրդարանն է աշխատում, մինչդեռ նույն ժամանակամիջոցում շուրջ մեկ ու կես տասնյակ կառավարություններ են հերթագայել մեկը մյուսին՝ իրենց վարչապետերով, նախարար-փոխնախարարներով, մարզպետներով: Բնականաբար՝ ամեն մի նոր կառավարություն աշխատել է իր պաշտոնավարման կարճ ժամկետում առավելագույնս կորզել կոռուպցիայի մեխանիզմներից՝ քաջ գիտակցելով, որ վաղ թե ուշ հեռանալու է:

Հայաստանում իսպառ բացակայում է սեփական կուսակցության կամ քաղաքական խմբավորման, էլ չենք ասում՝ ողջ հասարակության առջև արդյունավետ հաշվետվության կամ պատասխանատվության ինստիտուտը: Ավելին, բանն այնտեղ է հասել, որ նախարարական կամ մարզպետական պորտֆելներ ստացած «գործիչները» երբեմն գերադասում են հրաժարվել իրենց կուսակցական պատկանելությունից, քան բաղձալի պաշտոնից: Այս ֆոնին տեղի է ունեցել պետական կառավարման աշխատակազմի աննախադեպ ուռճացում, որի հիմնական պատճառներից մեկը ընտրական գործընթացի կոռումպացվածությունն է: Իշխանամետ ընտրազանգվածի, վերից վար ընտրական հանձնաժողովների մեջ ներգրավված բազմահազար մարդկանց մասնակցությունը ընտրակեղծիքներին, ընտրություններից հետո պետք է որոշակիորեն փոխհատուցվի՝ գործադիր իշխանության կառույցներում գայթակղիչ պաշտոններով: Ուստի այս շարժառիթը, ի վերջո, դառնում է քաղաքական կոռուպցիայի հզոր հարուցիչ:

Վերը նշված կոռուպցիոն գործոնները ընտրություն կոչված երևույթը հայկական իրականության մեջ վեր են ածում քաղաքական «կազինոյի»: Անհնար է նույնիսկ երևակայել, թե ինչ ոգևորությամբ են դրանք անցնում՝ սկսած առեղծիքաբանական խաղազումարների ծախսով ուղեկցվող «սև» քարոզչությունից, ամպագոռոռ նախընտրական խոստումներից, վերջացրած ընտրողների կամքի վրա ուժային-քրեական լծակներով գործադրվող բռնաճնշումներով և ձայների հաշվարկի ընթացքում դրսևորվող զանգվածային կեղծարարություններով: Այս տեսակետից

«հայաստանյան ընտրություններ» կոչված քաղաքական կազմնոյի մեջ ներ-
քաշված են պետական բոլոր այրերն ու կառույցները, քաղաքական, մերձքա-
ղաքական ու կեղծքաղաքական դեմքերն ու կուսակցությունները, թաղային
մասշտաբի հեղինակություններն ու քրական աշխարհի «տուգերը», գործարար
աշխարհի «երևելիները», հասարակության քիչ թե շատ ակտիվ զանգվածը:

Կարելի է ասել, որ երկրում աննախադեպ չափերի հասած կաշառակերու-
թյունը, շնորհիվ հասարակության ապաքաղաքական և արժեքային կողմնորո-
շումներից զուրկ զանգվածի, ընտրությունների ընթացքում որակապես նոր մա-
կարդակի է բարձրանում: Ի տարբերություն ընտրությունից-ընտրություն ընկած
ողջ ժամանակահատվածի, երբ կաշառք են վերցնում, յուրացնում կամ շորթում
պետական իշխանության բուրգը ներկայացնող բյուրոկրատիան, դատաիրա-
վական, կրթական, առողջապահական ու մնացյալ այլ համակարգերի ղեկավար
աշխատակիցները, բուն ընտրության ժամանակահատվածում կաշառք է վերց-
նում... շարքային ընտրողը (եթե ոչ բոլորը, ապա՝ մի զգալի մասը), այսինքն՝ նա,
ով ստիպված կամ կամավոր կաշառք է տալիս առաջիններին: Եվ դրանով...
շրջանը փակվում է:

Բացի այդ, իրեն քիչ թե շատ հարգող ցանկացած գործարար ներգրավված է
հայաստանյան ընտրական գործընթացների մեջ, քանզի իր գործի ծավալման
գրավականն ու երաշխիքը հենց այդօրինակ վարքագծի մեջ է տեսնում: Իսկ գոր-
ծի ընդլայնումը առաջին հերթին ֆինանսական ներդրում է ենթադրում, տվյալ
դեպքում՝ ընտրական գործընթացի մեջ: Գործարար մարդը ցանկանում է որքան
հնարավոր է մոտ լինել իշխանությանը, քանի որ վերջինիս թեկնածուի առատ
ֆինանսավորումը իր գործի համար երաշխավորում է արտոնյալ-մենաշնորհային
պայմաններ, հետևաբար՝ գերշահույթներ: Այնպես որ, ընտրություններում կա-
տարված հսկայական ծախսերը՝ զանազան ուղղակի ու անուղղակի կաշառք-
ների տեսքով, այդ գործարարի տեսանկյունից միանգամայն արդարացված են:
Առավել ևս, որ ո՛չ օրենքը, ո՛չ էլ օրենքի պահապանը ոչ մի փորձ չեն անում բռնել
զանգվածաբար ընտրակաշառք բաժանող չարագործի ձեռքն ու պատասխա-
նատվության կանչել նրան, քանզի ամեն ինչ շատ լավ կառավարվում և կոոր-
դինացվում է «վերևից»: Ըստ երևույթին, տարբեր «տրամաչափի» փողատե-
րերին այս հարցում ոգևորում է նաև խոհրդարանի գործարար պատգամավորների
տխրահռչակ փորձը, որոնք իրենց մանդատի հաշվին զբաղվում են սեփական
բիզնեսն առաջ մղելու և ստացած շահույթները գերշահույթների վերածելու չափ
ու սահման չճանաչող գործով: Դրա շարժառիթներից մեկն էլ ընտրական գործ-
ընթացներում իրենց ներդրած փողը հետ բերելու նպատակով համապատասխան
օրենսդրական-հարկային արտոնություններ կորզելն է:

4. Հասարակության արժեհամակարգի ազդեցությունը

Սովորաբար կոռուպցիոն երևույթների պատճառների հասարակական ընկա-
լումը կապվում է քաղաքական, տնտեսական, վարչական կամ իրավական լծակ-
ների չարաշահման հետ, ուստի՝ որպես կոռուպցիայի հիմնական դերակատար
ներկայացվում է պաշտոնյա-դրամաշորթի կերպարը: Անշուշտ, մեծ չափով դա
իհարկե այդպես է: Սակայն խնդիրն ունի ավելի լայն հասարակական ընդգրկում
ու կապվում է տվյալ հանրության արժեհամակարգի, մշակութային առանձնա-

հատկությունների, անցած պատմական հետագծի ու հասարակական մտածելակերպի հետ: Կոռուպցիան այս տեսակետից ոչ թե մեկ, այլ միանգամից մի շարք կողմերի՝ անհատի, հասարակության և պետության փոխհարաբերությունների ու փոխայանմանավորվածությունների օրգանապես շղկակաված համակարգ է: Այլ կերպ՝ կոռուպցիան միշտ հանդես է գալիս գործարքի տեսքով և այդ գործարքի կողմերը հավասարապես մեղավոր են տվյալ երևույթի մեջ: Պարտավոր ենք խոստովանել, որ նման հանցավոր գործարքի «կենսունակության» գլխավոր խթանիչներից մեկը հանրային գործուն է. այն է՝ հասարակությունը որքանով է հանդուրժում, ավելին՝ խրախուսում այս կամ այն կոռուպցիոն գործարքը և կոռուպցիան՝ իր ամբողջության մեջ: Դժբախտաբար, մեր հասարակության մեջ ներդրվել են խաղի այնպիսի ոչ ֆորմալ կանոններ, որոնք միանգամայն բարենպաստ են կոռուպցիոն փոխհարաբերությունների առաջացման համար:

Հայաստանյան իրականության մեջ կոռուպցիայի հզոր հարուցիչ է ավանդական համակեցությանը բնորոշ այնպիսի գործուն, ինչպիսին է քավոր-սանիկության ինստիտուտը կամ սանահերությունը: Շատ դեպքերում այս գործունը դառնում է օրենքը շրջանցելու և սանիկին հանիրավի բարիքներ ապահովելու միջոց: Մարդիկ ձգտում են քավոր-սանիկային հարաբերություններ հաստատել պաշտոնական հզոր լծակներ ունեցող անձանց հետ՝ նրանց հաշվին ինչ-ինչ հարցեր լուծելու-կարգավորելու անթաքույց ակնկալիքներով:

Տեսաբանները վաղուց են ուշադրություն դարձրել այն փաստի վրա, որ կոռուպցիան ծաղկում է ապրում այսպես կոչված՝ «շահագործողական պետության» պարագայում, երբ իշխանության (ինչը նույն է՝ պետական բյուրոկրատիայի) գլխավոր խնդիրը իր եկամտի մաքսիմալացումն է (խոսքը վերաբերում է և՛ լեզալ պետական բյուջեին, և՛ հավելյալ կերպով շորթվող գումարներին): Հայտնի տեսաբան Ս.Հանթինգտոնը գրում է, որ «կոռուպցիան հատկապես ծաղկում է բարեփոխումների (արդիականացման) ժամանակահատվածում, երբ քաղաքական ակտիվությունը գերազանցում է ինստիտուցիոնալ ակտիվությանը»⁸:

Տվյալ դեպքում կոռուպցիայի կտրուկ աճը պայմանավորված է ոչ միայն ու ոչ այնքան պետության իրավական նորմերի կիրառման անարդյունավետությամբ, որքան քաղաքացիական հասարակության անգործությամբ կամ թուլությամբ: Երբ քաղաքացիական հասարակությունը թույլ է, չկազմավորված, պետության «զավթումը» դառնում է չափազանց դյուրին գործ՝ կազմակերպված հանցագործ խմբերի կամ անհատների համար: Հայաստանում այս ամենին նպաստում է խորհրդային շրջանից ժառանգված կոռուպցիոն մտածելակերպը: Այն ժամանակ, համընդհանուր սակավության (դեֆիցիտի) պայմաններում բարիքներից ու տարբեր տեսակի ծառայություններից օգտվելու հիմնական վարքագիծը «վերևներում» պիտանի «մարդ» ճարել էր՝ հարցերը «տակից» լուծելու համար, երևույթ, որը նոր պայմաններում ավելի լայն ծավալներ է ընդունել:

Այսօր, թերևս, անհնար է պնդել, որ ազատական բարեփոխումների սկզբնավորումից երկու տասնամյակ անց Հայաստանի հասարակությունն ու պետական համակարգը ավելի ժողովրդավարական են, իսկ ազգային վերնախավերը՝ ավելի առաջադիմական, քան այդ բարեփոխումների արշալույսին: Ի վերջո, արժեքների կայունությամբ են որոշվում այս կամ հանրային ռազմավարական նախընտրությունները, ինքնակազմակերպման ու արդիականացման ունակությունները, վարքա-

8 St u Huntington S. Political order in changing societies. New Haven: Yale University Press, 1968. p. 84.

գծային կողմնորոշումներն ու բնորոշները, այդ թվում՝ բարեփոխումների առավել արդյունավետ տարբերակների ընտրությունը և դրանց հաջող իրականացման հավանականությունը: Եվ եթե դա այդպես է, ապա որոշակի արժեքային հենքի վրա բարեփոխումների այս կամ այն տարբերակի կիրառումը սոցիալական ձեռքբերումների հետ մեկտեղ, կարող է նաև ամրապնդել ազգի մշակութային-քաղաքակրթական որակները՝ դրանք դարձնելով հետագա առաջընթացի գործոն:

Փաստորեն, այսօր կարող ենք արձանագրել, որ բարեփոխումների այն տարբերակը, որը հետևողականորեն կիրառվել է նորանկախ Հայաստանում, ոչ միայն շոշափելի սոցիալական արդյունքների չի հանգեցրել, այլև խաթարել է ազգի մշակութային-քաղաքակրթական նկարագիրը՝ հարուցելով համակարգային կոռուպցիա, անբարոյականություն, դաժանություն, բռնություն, անտարբերություն թույլի ու անապահովի նկատմամբ: Առավել պատկերավոր ասած՝ ազատական բարեփոխումները խեղդվել են կոռուպցիայի «ծուղակում»:

5. Կոռուպցիան իբրև ինստիտուցիոնալ ծուղակ

Բարեփոխումներից ավելի քան մեկ ու կես տասնամյակ է անցել, ու այսօր կարելի է վստահաբար պնդել, որ «Վաշինգտոնյան կոնսենսուսի»⁹ սկզբունքների հիման վրա նախկին Խորհրդային Միության մասը հանդիսացող նորանկախ երկրների, այդ թվում և Հայաստանի Հանրապետության տնտեսությունների լայնամասշտաբ վերափոխումների գլխավոր արդյունքները հանդիսացել են ավտորիտար միտումներ ունեցող և ժողովրդավարական համակարգին հակոտնյա քաղաքական վարչակարգերի ձևավորումը, որոնց վարքագծի գլխավոր հատկանիշը կոռուպցիոն գործելակերպն է: Ստեղծվել են մենաշնորհների տիրապետության վրա հիմնված ոչ մրցունակ, զարգացման ու նորարարական ինքնակազմակերպման ներուժից զուրկ տնտեսական համակարգեր, որոնք պարզապես ածանցված են նույնքան անարդյունավետ ու ծախսատար ավտորիտար քաղաքական իշխանություններից: Այսպիսի քաղաքական համակարգերը երբեմն կոչում են կլեպտոկրատիկ համակարգեր¹⁰, որոնց բնորոշ հիմնական բաղադրիչները ստվերային տնտեսությունն են ու կոռուպցիան:

Այն, որ պետությանն այսօր չի հաջողվում պետական գանձարան հավաքագրել օրենքով սահմանված բոլոր հարկերը, և տարբեր գնահատումներով Հայաստանի տնտեսության ստվերային մասը կազմում է երկրի Համախառն ներքին արդյունքի մինչև 60 տոկոսը, հետևանք է ոչ միայն հարկահպատակության ցածր մշակույթի, այլև անսանձ ու հախուռն ազատական բարեփոխումների: Մտվե-

9 «Վաշինգտոնյան կոնսենսուսը» մակրոտնտեսական քաղաքականության այնպիսի եղանակ է, որը ենթադրում է պետական սեփականության զանգվածային մասնավորեցում, պետական բյուջեի նվազագույն դեֆիցիտ, պետական ծախսերի մեջ ենթակառուցվածքների, առողջապահության և սոցիալական ոլորտի ծախսերի գերակայություն, հարկերի դրույթաչափերի իջեցում, ֆինանսական շուկաների ազատականացում, ազգային դրամի ազատ փոխարժեք, արտաքին առևտրի ազատականացում, արտաքին ներդրումների սահմանափակումների վերացում, սեփականության իրավունքների պաշտպանություն: http://ru.wikipedia.org/wiki/Вашингтонский_консенсус

10 Կլեպտոկրատիան (հունարեն գողերի իշխանություն) այնպիսի վարչակարգ է, որի պայմաններում բոլոր պետական-քաղաքական որոշումները թելադրվում են մարդկանց մեղ շրջանակի անձնական շահերով: Կլեպտոկրատիայի բնորոշ հատկանիշերն են՝ կոռուպցիան, հատվածական շահերի լոբբինգը, երկարաժամկետ նպատակադրումների և ծրագրերի բացակայությունը: Կլեպտոկրատիկ քաղաքական վարչակարգերին բնորոշ է շորթումը բոլոր ներդրումային ծրագրերից, այդ թվում՝ արտաքին ներդրումներից: Կլեպտոկրատիայի պայմաններում խոսք անգամ չի կարող լինել ժողովրդավարական ինստիտուտների գոյության և գործունեության մասին:

րային տնտեսության հակառակ երեսին սահմաններ չճանաչող կոռուպցիան է: Ասել է, թե սովերում գոյացող ու շրջանառվող եկամուտները ամենևին էլ դուրս չեն մնում հարկահան պաշտոնյաների ու նրանց վերադասների տեսադաշտից: Պարզապես այդ եկամուտներից հարկահավաքը կատարվում է սովերում, և նշված ահռելի գումարները վճարվում են բյուրոկրատական բուրգի շղթայի տարբեր օղակներում կանգնած անձանց:

Տնտեսության սովերայնության հիմնապատճառներից մեկն էլ հոգեբանական բնույթ ունի, այսինքն՝ մարդիկ վստահ չեն, որ իրենց բացահայտորեն վճարած հարկերի հաշվին գոյացած միջոցները նպատակային կծախսվեն ու կուղղվեն համընդհանուր բնույթի բարիքների ստեղծմանը, որոնցից կօգտվեն նաև իրենք՝ հարկատուները: Այսպիսի պայմաններում հարկերի օրինական վճարումից զանգվածաբար խուսափելը դառնում է վարքագծի կայուն և համընդհանուր տարածում ստացած նորմ: Ավելին, դիտարկումները և փորձագիտական գնահատումները ցույց են տալիս, որ եթե հարկերի դրույքները բարձր են, իսկ հարկահավաքի վարչարարական մեխանիզմները՝ անարդյունավետ (ասել է՝ կոռումպացված), այդ պայմաններում տնտեսվարող շատ ու շատ սուբյեկտների համար որոշակի «վճարի» դիմաց հարկերից խուսափելը դառնում է շահավետ գործարք:

Այսպիսով կոռուպցիան, մեծ հաշվով, ոչ թե առանձին ոլորտներում դրսևորվող հատվածական երևույթ է, այլ ախտահարել ու կաթվածահարել է Հայաստանի ողջ պետական ու հասարակական համակարգը: Այս տեսանկյունից այն վեր է ածվել ազգային անվտանգության առաջնահերթ խնդրի, որից այն կողմ պետականության կորուստն է: Համակարգայնորեն կոռումպացված բյուրոկրատիան անկառավարելի է: Հակակոռուպցիոն բնույթի «Միջազգային թափանցիկություն» (Transparensy Internacionale) հեղինակավոր կազմակերպության գնահատման համաձայն՝ Հայաստանում «Կոռուպցիայի ընկալման ցուցիչը» 2009 թ. կազմել է 2,7, նախորդ տարվա համեմատ նվազելով 0,2 կետով: Իսկ ընդհանուր առմամբ, 2003 թվականին Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի ընկալման ցուցիչը կազմել է 3,0, 2008 թ.՝ 2,9¹¹ (0-10 բալանոց սանդղակում որքան բարձր է ցուցիչը, այնքան կոռուպցիայի մակարդակը ավելի ցածր է): Այնինչ, Հայաստանի կառավարությունը հենց 2003 թ. ընդունեց հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրը և պարտավորվեց հետևողականորեն կրճատել կոռուպցիայի մակարդակը երկրում: Ըստ վերոնշյալ կազմակերպության մեթոդաբանության, եթե որևէ երկրում կոռուպցիայի մակարդակի ցուցիչը ցածր է 3,0-ից, սպա այդ երկրում կոռուպցիան համակարգային բնույթ ունի, որի հաղթահարումը առաջնահերթ խնդիր է:

Սակայն իրավիճակի ամբողջ զավեշտն այն է, որ հակակոռուպցիոն ծրագրերը Հայաստանում մշակում ու իրականացնում են իրենք՝ կոռումպացված պաշտոնյաները, ուստի կոռուպցիոն շուկան ծաղկում է ապրում, քանի որ ավելի մանր կոռուպցիոներներից սովերային եկամուտները փոխանցվում են ավելի խոշորներին, արդյունքում՝ կոռուպցիան էլ ավելի է կենտրոնանում և ուժեղանում: **Ստացվում է, որ Հայաստանում «հակակոռուպցիոն պայքարի» տրամաբանությունն այսպիսին է՝ հնարավորինս սահմանափակել ապակենտրոնացված կոռուպցիայի համակարգը և այն առավելագույնս կենտրոնացնել:** Եվ սա

11 Տե՛ս <http://www.transparency.am/>

վերաբերում է բոլոր պետական հաստատություններին:

Հայաստանյան փորձագետների հետազոտություն-վերլուծությունը ևս փաստում է մեզանում կոռուպցիայի չափազանց տարածվածության ու ընդգրկման մեծ մասշտաբների մասին: Մասնավորապես, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ» կազմակերպության (CRRC) հայաստանյան մասնաճյուղի փորձագետների կողմից 2008 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետության 1549 չափահաս քաղաքացիների շրջանում անցկացվել են լայնածավալ հարցումներ, որոնց արդյունքների հիման վրա կատարված հետազոտությունները բացահայտել են կոռուպցիոն ռիսկերի առավել տարածված ոլորտները¹²: Ըստ հարցման մասնակիցների 2/3-ի գնահատականների, Հայաստանում կոռուպցիան չափազանց տարածված երևույթ է: Հարցվածների 66 տոկոսը կոռուպցիան վերագրել է առաջին հերթին՝ ընտրական համակարգերին և գործընթացներին, 65 տոկոսը՝ ոստիկանությանը, 61 տոկոսը՝ առողջապահական, 58 տոկոսը՝ կրթական ոլորտներին¹³: Պատասխանելով կոռուպցիայի առավել էական պատճառներին վերաբերող հարցերին, հարցվածների 61 տոկոսը նշել է, որ ստիպված է կաշառք տալ, քանի որ «գործը գլուխ բերելու» այլ ճանապարհ չկա¹⁴:

Վերը նշված հարցումները վկայում են նաև, որ գործարարությամբ զբաղվող մարդկանց գնահատականներով շարունակում են մեծապես կոռումպացված մնալ հարկային և մաքսային ոլորտները: Եվ դա իր լուրջ պատճառներն ունի: Այն, որ պետությանն այսօր չի հաջողվում հավաքել օրենքով սահմանված բոլոր հարկերը, և միջին գնահատականներով՝ տնտեսության ստվերայնությունը երկրի ՀՆԱ-ի մոտ 50 տոկոսին է հասնում, ոչ միայն հարկահպատակության պատշաճ մշակույթի ու ավանդույթների բացակայության հետևանք է, այլև պետական ինստիտուտների նկատմամբ վստահության պակասի: Մարդիկ վստահ չեն, որ իրենց հարկերի վճարումների հետևանքով գոյացած պետական միջոցները նպատակային կծախսվեն և կուղղվեն առավելապես իրենց ընդհանուր կարիքների բավարարմանը: Այս պայմաններում իրական եկամուտները մասամբ թաքցնելու ճանապարհով հարկերի վճարումից զանգվածաբար խուսափելը դառնում է վարքագծի կայուն և համընդհանուր տարածում գտած նորմ:

Այնտեղ ենք հասել, որ հարկերին առնչվող օրենքների ու օրենսդրական նախաձեռնությունների մեջ հաճախ գետեղված են կոռուպցիայի մեխանիզմները: Այս պայմաններում մարդիկ գերադասում են ավելի քիչ վճարել՝ կաշառքի տեսքով, քան ավելի շատ վճարել՝ «թանկ օրենքների» դիմաց: Պատկերավոր ասած՝ այս պայմաններում կոռուպցիան հանդես է գալիս որպես «թանկ օրենքների» պահանջներից խուսափելու կամ օրենքը շրջանցելու գին: Հարկային հավաքագրումների խիստ ցածր մակարդակը վկայում է նաև կոռուպցիայի աճի բարձր տեմպերի մասին: Այս տեսակետից կոռուպցիայի ազդեցությունն աղքատ ընտանիքների վրա շատ ավելի մեծ է, քան հարուստների, թեև վերջիններս բացարձակ թվերով ավելի մեծ կաշառքներ ու անլեզալ վճարումներ են կատարում:

Երկրի տնտեսական ու սոցիական իրավիճակի կտրուկ բարելավման, ինչու չէ, նաև բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացման կարևորագույն նախա-

12 Տե՛ս 2008 թ. Հայաստանի բնակչության շրջանում անցկացված կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի հետազոտություն, 7ՈԿԿ, 2009 թ. 288 էջ:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 2:

14 Տե՛ս նույն տեղում, էջ 16:

պայմաններից մեկը անօրինական եկամուտների ստացման արգելափակումն է, այդ թվում՝ եկամուտների ու գույքի պարտադիր հայտարարագրման օրենսդրական մեխանիզմների ներդրումը: Ավելի քան մեկ տասնամյակ տևած քաշքշուկներից հետո, և ոչ առանց Հայաստանի արտաքին ֆինանսական դոնորների ճնշման, վերջապես այդ համակարգը ներդրվեց: Այն պահանջում է եկամուտների և ունեցվածքի ամենամյա պարտադիր հայտարարագրում: Օրենքով սահմանված է որոշակի նվազագույն շեմ, որից բարձր եկամուտ ստացող ունևոր քաղաքացիները, ինչպես նաև պետական բարձրաստիճան պաշտոնյաները ու նրանց կապակցված անձինք պետք է հարկային մարմիններին տեղեկություններ տրամադրեն իրենց ստացած եկամուտների մասին:

Տևական հանրային քննարկումների ու հրապարակային հայտարարությունների ընթացքում Հայաստանի տարատեսակ պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները առիթը բաց չէին թողնում վստահեցնելու, թե եկամուտների հայտարարագրման մեխանիզմի ներդրումը էապես կնվազեցնի երկրում բոլոր սահմաններն անցած կոռուպցիան: Սակայն այդ համակարգի ներդրումից հետո տարիներ են անցել և բնավ չի երևում, որ որևէ կոռումպացված պաշտոնյա հանրությանը կամ դատական մարմիններին բացատրություն տա, թե որտեղի՞ց է կարողացել ձեռք բերել իր բազմամիլիոն կարողությունը, թանկարժեք անշարժ գույքը, բիզնեսը, այն էլ՝ կարճ ժամկետներում: Հարկային համակարգի այդօրինակ «մոդայիկ» բարեփոխումը ևս կարելի դասել չկայացածների շարքը, քանզի ընթացել է ձևականորեն, այնինչ ամենագոր ու ամենակուլ կոռուպցիան Հայաստանում շարունակում է իր «հաղթարշավը»:

Այդուհանդերձ, եկամուտների և ունեցվածքի համընդհանուր հայտարարագրումը կարող էր ինչ-որ կերպ զսպել աննախադեպ չափերի հասած կոռուպցիան: Անշուշտ, կարող էր, եթե դրան համարժեք քաղաքական կամք դրսևորվեր երկրի քաղաքական ղեկավարության կողմից: Կոռուպցիայի մեծ ծավալները վկայում են, որ այդ կամքը բացակայում է: Ավելին, կոռուպցիան մի տեսակ հարմար միջոց է պետական կառավարման բուրգը վերահսկելի պահելու և ընտրությունից-ընտրություն վերարատադրելու համար: Ասել կուզի՞ կոռումպացված պաշտոնյան ամենից կառավարելի է, հակառակ դեպքում ոչ մի երաշխիք չկա, որ ընտրությունների ժամանակ նա, չարաշահելով իր պաշտոնական դիրքը, անպայման կպայքարի իշխանության թեկնածուի (կամ՝ թեկնածու կուսակցության) հաղթանակն ապահովելու համար: Ավելին, այդ պաշտոնյան գտնվելով «կոռուպցիոն ծուղակում», հարկադրված է իշխանության թեկնածուի հաղթանակն ապահովելու համար հավելյալ ծախսեր կատարել, իսկ այդ ծախսերի աղբյուրը վերստին...կոռուպցիան է: Եվ շրջանը փակվում է:

Այսպիսով, Հայաստանի տնտեսության մեջ առկա առանցքային իրողությունները, փաստորեն՝ կոռուպցիոն քաղաքական համակարգի անմիջական հետևանքներն են:

Կոռուպցիան, իր տարաբնույթ դրսևորումներով, ըստ էության, լրացուցիչ բեռ է, որը կրում է հայ հասարակությունը իր կենսագործունեության տարբեր ոլորտներում, ինչի հետևանքով ստեղծվում են խոչընդոտներ նրա զարգացման և առաջադիմության համար:

Զարգացած ու ժողովրդավարական երկրները ծաղկման ու բարգավաճման շնորհիվ կարողացել են տասնամյակների և հարյուրամյակների ընթացքում

ձևավորել կոռուպցիայից զերծ կամ կոռուպցիայի նվազագույն մակարդակով բնութագրվող պետական և քաղաքացիական ինստիտուտներ: Այդ պատճառով, այդ երկրներում անօրինական եկամուտների կամ որ նույնն է՝ կոռուպցիոն շրջանառության ծավալները շատ ցածր են: Նման երկրներում այսպես կոչված՝ «կոռուպցիոն շուկայի» ծավալները չեն անցնում երկրի ՀՆԱ-ի 3-5 տոկոսը: Այլ է վիճակը զարգացող ու այսպես կոչված՝ անցումային երկրներում, որոնցից է նաև Հայաստանի Հանրապետությունը: Փորձագիտական գնահատումները ցույց են տալիս, որ այդօրինակ երկրներում կոռուպցիոն շուկայի ծավալները հասնում են երկրի Համախառն ներքին արդյունքի մինչև 30 տոկոսին: Ըստ ռուս փորձագետների գնահատականների՝ Ռուսաստանի Դաշնությունում «գործարար կոռուպցիայի» մակարդակն ավելի բարձր է և կազմում է երկրի համախառն ներքին արդյունքի 54 տոկոսը¹⁵: Բացարձակ գումարով կոռուպցիոն շրջանառության ծավալն այս երկրում տարեկան հասնում է մոտ 318 միլիարդ դոլարի: Եթե հաշվի առնենք, որ Հայաստանի Հանրապետությունում ինստիտուցիոնալ պայմանները և կոռուպցիա ծնող պատճառներն ու շարժառիթները համանման են Ռուսաստանի Դաշնության և նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների պայմաններին, ապա կարելի է Հայաստանի կոռուպցիոն շուկայի շրջանառության ծավալները մոտավորապես գնահատել ՀՆԱ 30-50 տոկոսի սահմաններում: Բացարձակ արտահայտությամբ դա տարեկան կազմում է 3-3,5 միլիարդ դոլար: Մյուսն էլ այն գումարներն են, որոնք այլ պայմաններում, եթե բարելավվեր ինստիտուտների որակը, վերացվեր կաշառակերությունը և կոռուպցիան՝ իր բոլոր դրսևորումներով, կծառայեին երկրի զարգացմանը և ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը:

6. Կոռուպցիայի հաղթահարման տնտեսական միջոցները

Անցումային շրջանի կարևորագույն առանձնահատկություններից մեկը կապիտալի կուտակման կիսալեզալ, հաճախ նաև՝ ստվերային-քրեական գործընթացների բավականին մեծ տարածումն է հետխորհրդային ու հետկոմունիստական բազմաթիվ երկրներում, այդ թվում և Հայաստանում: Այն պայմաններում, երբ շատ սեղմ ժամկետներում տեղի են ունենում պետական սեփականության զանգվածային օտարման, ապապետականացման-մասնավորեցման գործարքներ, երբ տնտեսական գործունեություն վարողները հնարավորություններ են ստանում եկամուտների ձևավորումն ու բաշխումը իրականացնել չափազանց թույլ և ոչ ձեռնհաս պետական ինստիտուտների հսկողության պայմաններում, երբ պետական-բյուրոկրատական ապարատի ճնշումը տնտեսության վրա անցնում է կրիտիկական սահմանները, խոսել բնականոն կապիտալակազմավորման ու կապիտալների լեզալ շրջանառության մասին, թերևս, ավելորդ է:

Սակայն, մյուս կողմից, բազմաթիվ երկրների փորձը վկայում է, որ ինստիտուցիոնալ վերափոխումները կամ որ նույնն է՝ անցումային շրջանը, իրենց տրամաբանական ավարտն ունեն, երբ այս կամ այն կերպ կուտակված կապիտալը օրինական կարգավիճակ է ստանում, ինչն էլ ապահովում է թե՛ բարեփոխումների անշրջելիությունը և թե՛ այդ նույն կապիտալի արդյունավետ գործադրումը: Նման ավարտը հնարավոր է, եթե տվյալ երկրում եղանակ ստեղծող

¹⁵ Տե՛ս «Вопросы Экономики». Журнал. N 1. 2007, с 6.

քաղաքական վերնախավը և հասարակությունն՝ ամբողջությամբ վերցրած, կարողանա իրականացնել կապիտալի արդյունավետ համաներման գործընթաց, ինչը թույլ կտա պետության, հասարակության և գործարարության միջև ձևավորել փոխադարձ վստահության այն դաշտը, որն, ի վերջո, դառնում է հասարակական համաձայնության անկյունաքարը:

Այստեղ, անշուշտ, շատ կարևոր է, որպեսզի մի կողմից՝ հասարակությունը (ի դեմս շարքային ընտրողների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտների), մյուս կողմից՝ գործարար հանրությունը, գիտակցեն կապիտալի համաներման, ասել է թե՛ տարբեր զարտուղի ճանապարհներով, հիմնականում՝ անօրինական ու անլեգալ միջոցներով, առաջին հերթին՝ հարկերը չվճարելով, կուտակված միջոցների բացահայտման-հայտարարագրման կարևորությունն ու փոխշահավետությունը: Կապիտալի համաներման գլխավոր նպատակը, անշուշտ, տնտեսական համակարգի գործունեության համար լրացուցիչ միջոցների ձեռքբերումն է, հատկապես՝ երկրից տարբեր ճանապարհներով արտասահման տեղափոխված ֆինանսական ու նյութական միջոցների հետվերադարձի ճանապարհով:

Միջազգային փորձը վկայում է, որ կարող են կիրառվել կապիտալի համաներման բավականաչափ կոշտ, ինչպես նաև՝ համեմատաբար մեղմ տարբերակներ: **Առաջին** դեպքում, հայտարարատուները իրենց կապիտալները լեգալացնում-օրինականացնում են նախկինում չվճարած հարկերը ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարելու պայմանով: Ընդ որում, փորձը ցույց է տալիս, որ մեծան դեպքում կիրառվում են զգալիորեն ավելի ցածր, զեղչված դրույքաչափեր: Այսպիսին էր, օրինակ, 2001 թվականին Իտալիայում իրականացված հարկային համաներումը: Այն ենթադրում էր հարկային այնպիսի դրույքաչափ, որը պետք է կազմեր երկիր վերադարձվող գումարի ընդամենը 2,5 տոկոսը: Ըստ իտալական փորձագետների՝ այդ դեպքում պետք էր երկիր վերադարձնել շուրջ 500 միլիարդ դոլար, այնինչ արդյունքում հնարավոր եղավ վերադարձնել ակնկալվածի ընդամենը 1/10-ը (շուրջ 55 միլիարդ դոլար): Թերևս, մի փոքր ավելի հաջող էր կապիտալի համաներման հնդկական փորձը, որը գործադրվեց ավելի վաղ՝ 1997 թվականին, ընդ որում, շատ ավելի բարձր՝ 30 տոկոս դրույքաչափով: Այդ պայմաններում հայտարարագրվեց (փաստորեն՝ երկիր վերադարձվեց) 8,2 միլիարդ դոլար, որից մոտ 2,5 միլիարդը մուտքագրվեց պետական բյուջե, թեև ակնկալվում էր շատ ավելի քիչ՝ մոտ 1 միլիարդ դոլար:

Ռուսաստանում ևս վերջին տարիներին մեծ մի փորձ արվեց: 2005 թ. Ռ-Ռ նախագահը դիմեց երկրից կապիտալներ արտահանած գործարարներին՝ առաջարկելով վճարել վերադարձման ենթակա գումարների 13 տոկոսն՝ իբրև եկամտահարկ և դրանք լեգալացնել՝ փոխանցելով հայրենական բանկերում բացված իրենց հաշիվներին: Դատելով Ռուսաստանից շարունակվող կապիտալի արտագաղթից, կատարված առաջարկը այնքան էլ մեծ արձագանք չգտավ: Պատճառը, թերևս, պետական կառույցի նկատմամբ գործարար հանրության հարաճուն անվստահությունն էր, ինչպես նաև նույն այդ գործարարների կողմից այսպես ասած՝ այլընտրանքային վարքագիծ դրսևորելու, այսինքն՝ հարկ չվճարելու, պետությանը խաբելու, մոլորեցնելու գործելաճը:

Երկրորդ դեպքում կապիտալը լեգալացվում է սուկ հայտարարագրման և

պետության կողմից օրինականացվող ներդրման ելակետային պայմանները ընդունելու-ամրագրելու ճանապարհով: Նման պարագայում պետությունը հստակ արտահայտված հարկային-ֆիսկալ նպատակներ չի հետապնդում: Իհարկե, այս դեպքում էլ պետությանը կարող են մեղադրել խտրական վերաբերմունքի մեջ, երբ ավելի ազնիվ հարկատուները փաստորեն հայտնվում են անհավասար պայմաններում: Սակայն, շատ ավելի կարևորը ստվերային բիզնեսի խողովակները փակելն է, բոլոր գործարարներին հավասար մրցակցային պայմանների մեջ դնելը:

Այս տեսակետից, հետխորհրդային երկրների, կարծում ենք նաև՝ Հայաստանի պարագայում, առավել կիրառելի է երկրորդ տարբերակը, երբ կապիտալի լեզալացման դիմաց պետությունը որևէ վճարում չի պահանջում, այլ պարզապես ամրագրում է ելման կետը: Ի դեպ, նման փորձ կիրառվել է Դազախստանում՝ դարձյալ 2001 թվականին, որտեղ լեզալացվող գումաներից հարկային մասհանումներ չարվեցին: Արդյունքում՝ երկիր վերադարձավ շուրջ 480 միլիոն դոլարի «արտագաղթած» կապիտալ, թեև ակնկալվում էր մոտ 550 միլիոն դոլար:

Իհարկե, միամտություն կլինի մտածել, որ արտասահման «արտագաղթած» բոլոր կապիտալները կարելի է հետ վերադաճնել: Դա անհնար է, քանզի սրանց մի զգալի մասը արտագաղթել է ... մարդկանց հետ միասին՝ ներդրվելով անշարժ գույքի, արժեթղթերի, բիզնեսի ու տարատեսակ ակտիվների մեջ: Իհարկե, այս արտագաղթած կապիտալների մի որոշակի մասն արդեն հետ է վերադարձել նաև «օտարերկրյա» ներդրումների տեսքով: Դրանք, ըստ էության, հայաստանյան ծագման օտարերկրյա ներդրումներ են, որոնք նման կարգավիճակ են ստացել, մի կողմից՝ իրենց քրեածին կամ ստվերային ծագման, մյուս կողմից՝ օրենքով նրանց տրամադրվող շահութահարկի արտոնությունը օտարերկրյա կամ դրանց հետ համատեղ ընկերություններին վերագրելու պատճառով:

Ստացվում է այնպես, որ այսպես կոչված՝ օտարերկրյա ներդրումներ ասվածը մեզանում փաստորեն՝ եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մասնակիորեն, Հայաստանից գողացված կամ կաշառքների ձևով շորքված ու արտասահմանյան բանկերում կամ տարբեր օֆշորային գոտիներում «նստած» հայաստանյան ծագման կապիտալների լեզալացման-վլացման ու հետվերադարձման գործընթացներ են: Այլ կերպ, դա կապիտալների մի յուրօրինակ համաներում է, որին այսպես ասած՝ ինստիտուցիոնալացման տեսք է տրված (օրենքներով, լիցենզավորման կամ սերտիֆիկացման համակարգերով և այլն):

Վերջապես, կապիտալի համաներման համար շատ կարևոր է, որպեսզի խստորեն պահպանվի պետությանը փոխանցվող տեղեկությունների գաղտնիությունը: Հնարավոր է՝ այդ տեղեկությունները փոխանցեն ֆինանսական միջնորդներն ու տրվեն երաշխիքներ, որ հարկային կամ իրավապահ կառույցները հետաքննություն չեն սկսի եկամուտների (կապիտալների) ծագման աղբյուրների օրինականության ստուգման ուղղությամբ:

7. Ինստիտուցիոնալ և քաղաքական բարեփոխումներ

Հայաստանում կոռուպցիոն համակարգը վերացնելը չափազանց բարդ խնդիր է, քանզի այս հարցի շուրջ առկա են միջազգային փորձը, կոռուպցիայի

հաղթահարման հաջողված և ինչու չէ նաև՝ ձախողված օրինակները և այլն: Սակայն հակակոռուպցիոն պայքարի հաջողությունն իր ամբողջության մեջ ենթադրում է ինչպես ինստիտուցիոնալ համակարգի ձևական տարրերի՝ պետական հաստատությունների, օրենքների ու կազմակերպությունների, այնպես էլ հասարակության արժեհամակարգի ու մտածելակերպի համարժեք բարելավումներ: Սրանց հետ մեկտեղ անհրաժեշտ է վճռական քայլերով ու հետևողական ջանքերով կոռուպցիոն երևույթներն ու սխեմաները արմատախիլ անելու՝ իշխանության քաղաքական կամքը: Այս ամենն, իհարկե, պահանջում է, որպեսզի երկրի քաղաքական ղեկավարությունն ինքը վեր կանգնի կոռուպցիոն վարքագծից և իր քայլերը բխեցնի բացառապես օրենքի պահանջներից:

Հակակոռուպցիոն արդյունավետ քաղաքականությունը, անշուշտ, պետք է հիմնված լինի միջազգային դրական փորձի առանձին տարրերի վրա, սակայն վերը նշված հանգամանքները հաշվի առնելով, հարկ է, որ դրանք տեղայնացվեն ու հարմարեցվեն հայաստանյան իրողություններին ու մտածելակերպին: Միջազգային փորձը հուշում է, որ օրենսդրորեն պետք է սահմանափակել և հնարավորինս բացառել այն պայմանները, որոնք նպաստում են քրեական անցյալ ու քրեական վարքագիծ ունեցող անձանց կամ նրանց խմբերի ներթափանցումը քաղաքական կառավարման ու գործադիր իշխանության համակարգեր: Ի՞նչ քայլեր են անհրաժեշտ.

1. Նախ և առաջ՝ անհրաժեշտ է իրականացնել իշխանության բարեփոխումներ՝ սկսած երկրի սահմանադրական կարգից, օրենսդիր, գործադիր իշխանություններից, մինչև իշխանության դատական, իրավական ոլորտները: Անհրաժեշտ է ձևավորել իրական հակակշիռների ու զսպումների մեխանիզմ, և այս համատեքստում, իսկապես, իմաստ ունի մտածել երկրի կառավարման նախագահական բնորոշից վարչապետական կառավարման համակարգին անցում կատարելու մասին: Թերևս, քրեաօլիգարխիկ համակարգը ապամոնտաժելու և արդյունավետ ու «էժան» ինստիտուտների համակարգ ձևավորելու ճանապարհը դա է:
2. Անշուշտ, այս ամենը հնարավոր կլինի իրականացնել, եթե ապակոռուպացվեն ու բարելավվեն ընտրական մեխանիզմները, երաշխավորվեն ազատ, արդար, թափանցիկ ու ժողովրդավարական ընտրությունները, որոնք հզոր հակակոռուպցիոն դերակատարություն ունեն: Միայն այդ կերպ հնարավոր կլինի ձևավորել այնպիսի օրինական, հաշվետու և պատասխանատու իշխանություն, որը շահագրգռված ու հակված կլինի արդար և կոռուպցիայից գերծ կառավարման:
3. Օրենսդրական փոփոխությունների միջոցով պետք է ձգտել հասնել երկրի քաղաքական ինստիտուտների (քաղաքական կուսակցություններ, քաղաքական միավորումներ, հասարակական կազմակերպություններ և այլն) գործունեության թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև իրական ներկուսակցական ժողովրդավարության հաստատմանը:
4. Անհրաժեշտ է իրականացնել պետական կառավարման ոլորտի լայնածավալ բարեփոխումներ այն հաշվով, որպեսզի մի կողմից՝ բարձրացվի պետական կառավարման համակարգի արդյունավետությունը, մյուս կողմից՝ նվազի բյուրոկրատական ճնշումը տնտեսության վրա: Այդ բարեփո-

խումների արդյունքում անհրաժեշտ է կրճատել պետական կառավարման անձնակազմի թվաքանակի 1/3 մասը: Այս քայլը հնարավորություն կտա էապես բարելավել պետական ծառայությունների որակը, բարձրացնել պետական ծառայողների պատասխանատվությունը և, իհարկե, աշխատավարձը: Պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման բնագավառների բարեփոխումները պետք է իրագործվեն այն հաշվով, որպեսզի դրանցում բացառվեն շահերի բախումը, կլանային, ընտանեական, խնամհական կամ խմբային այլ շահերի հիման վրա ղեկավար կադրերի ընտրությունն ու տեղաբաշխումը:

5. Օրենսդրական մեխանիզմները պետք է վերանայվեն այնպես, որպեսզի ապահովեն գործադիր իշխանության առավել արդյունավետ կառուցվածքը, քափանցիկությունը և վերահսկելիությունը, քաղաքացիական ծառայության ինստիտուտը հիմնված լինի մրցակցային սկզբունքների վրա, գերծ լինի երկիմաստությունից՝ վերադաս ատյանների կամ անձանց որոշումների կամայական բնույթից, իսկ հաճախ էլ՝ քաղաքական պատճառաբանվածությամբ: Քանի որ կոռուպցիան դարձել է համակարգային որոշիչ ու վերածվել է ազգային անվտանգության սպարնալիքի, այն արմատախիլ անելու կամ նրա ազդեցությունը սահմանափակելու համար անհրաժեշտ են արտակարգ միջոցառումներ, այդ թվում՝ կազմակերպական բնույթի: Այս տեսակետից, նպատակահարմար է ստեղծել արտակարգ լիազորություններով օժտված մասնագիտացված հակակոռուպցիոն մարմին (կենտրոն կամ հանձնաժողով), որը պետք է համակարգի կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր քայլերը, ունենա ամենաբարձր կարգավիճակ և վերահսկողության ու դիտարկման տակ պահի հակակոռուպցիոն միջոցառումներն ու գործողությունները:
6. Թեև նորանկախ Հայաստանի արդեն երկու տասնամյակ բոլորող պատմության ընթացքում լուրջ միջոցներ են ծախսվել երկրի իրավապահ ու դատական համակարգերի բարեփոխման և այդ բնագավառներում ժողովրդավարական համակարգերին բնորոշ մեխանիզմների ներդրման ուղղությամբ, սակայն նշված ոլորտները շարունակում են մնալ կոռուպցիայի, կամայականության, մարդու տարրական իրավունքների ու արդարադատության ոտնահարման ասպարեզներ: Հակակոռուպցիոն պայքարի տրամաբանությունը հուշում է, որ այս բնագավառներում լուրջ ինստիտուցիոնալ վերափոխումներ են անհրաժեշտ, որոնք պետք է ապահովեն առաջին հերթին՝ դատական իշխանության իրական անկախությունը գործադիր իշխանությունից, ուստի այդ նպատակով, թերևս, իմաստ ունի ներդնել շրջանային դատավորների ընտրովիության ինստիտուտը: Բացի այդ, հակակոռուպցիոն պայքարի համատեքստում պետք է դիտել նաև երդվյալ դատավորների ինստիտուտի ներդրումը, ինչը զսպաշապիկ կդառնա առանձին դատավորների կամայական վճիռների ու որոշումների համար:
7. Թերևս նույն կարգի փոփոխությունների կարիք ունի նաև ոստիկանության համակարգը: Հատկապես վերջին տարիների ընթացքում ոստիկանության համակարգի կողմից մարդու իրավունքների դեմ կատարված աղաղակող ոտնձգությունները որևէ կասկած չեն թողնում, որ այնտեղ անհրաժեշտ են արմատական ու ծավալուն բարեփոխումներ: Այս բնագավառում բարեփո-

խումների ներկա իմիտացիան (նմանակումը) կարող է էլ ավելի սրել իրավիճակը և խորացնել բնակչության հարածուն անվստահությունը այդ կառույցի նկատմամբ: Որպես արդյունավետ ու արմատական լուծում՝ ոստիկանության համակարգի խնդիրները կարգավորելու և նրա գործողությունները սահմանադրական դաշտ բերելու համար, թերևս, իմաստ ունի ներդնել տեղական (շրջանային, քաղաքային) ոստիկանապետի ընտրովության ինստիտուտը:

8. Հակակոռուպցիոն ռազմավարության համատեքստում պետք է արմատական փոփոխությունների ենթարկվի երկրում իրականացվող տնտեսական քաղաքականությունը: Նախ և առաջ՝ հայեցակարգային փոփոխություններ են անհրաժեշտ հարկաբյուջետային քաղաքականության ոլորտում: Հարկային լծակների օգտագործումը պետք է ծառայի տնտեսության զարգացմանն ու նրա մրցունակության մակարդակի բարձրացմանը: Անհրաժեշտ է ուժեղացնել պետական բյուջեի ծախսերի իրականացման հակակոռուպցիոն մեխանիզմները՝ այն հաշվով, որպեսզի բացառվեն Հայաստանում լայնորեն տարածված այնպիսի երևույթներ, ինչպիսիք են՝ հավելագրումները (այսպես կոչված՝ «ատկատները»), բյուջեի միջոցների ուղղակի հափշտակությունները, պետական գնումների իրականացման ընթացքում առկա գնային ու մրցութային ձեռնածությունները և այլն:
9. Անհրաժեշտ է վերանայել նաև տնտեսության պետական կարգավորման ողջ համակարգը՝ ինչպես դրամավարկային, այնպես էլ հարկաբյուջետային քաղաքականության մասով: Դրամավարկային քաղաքականությունը պետք է ձեռքբազատել սովերային քաղաքական ճնշումներից ու լոբբիստական ներգործություններից և այն ծառայեցնել տնտեսության զարգացման խնդիրներին: Դրամական զանգվածի կարգավորումը և դրամավարկային մյուս գործիքների կիրառումը պետք է բխի տնտեսության ռազմավարական զարգացման ծրագրերից և իր բնույթով լինի նորարարամետ:
10. Հակակոռուպցիոն արդյունավետ ռազմավարության մշակման և իրականացման համար հարկավոր է Հայաստանում ուժեղացնել կոլեկտիվիստական մտածելակերպը՝ այն փաստի գիտակցումը, որ հակակոռուպցիոն պայքարի ընթացքում ազատվող ռեսուրսները ծառայեցվելու են ազգային-պետական համընդհանուր շահերին՝ դարաբաղյան խնդրի հայանպաստ լուծմանը, տնտեսական և տեխնոլոգիական զարգացմանը, հասարակության բարեկեցության բարձրացմանը: Հասարակությունը պետք է ընկալի, հավանություն տա ու աջակցի օրվա իշխանության հակակոռուպցիոն ծրագրերին ու գործողություններին: Կարևորն այն է, որպեսզի հանրությունը հաղթահարի կոռուպցիոն ճանապարհով սեփական խնդիրները լուծելու շարժառիթների հետ կապված իր նախկին մտակաղապարները:
11. Հակակոռուպցիոն մեխանիզմներն ու ծրագրերը այնպես պետք է կազմվեն, որպեսզի ապահովվի քաղաքացիների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասնակցությունը հակակոռուպցիոն միջոցառումներին և գործողություններին: Միայն երկրի քաղաքացիների ակտիվությունը և մշտական կազմակերպված ճնշումը պետական հաստատությունների, պաշտոնյաների, գործարար կառույցների վրա կարող է երաշխավորել նրանց գործողությունների օրինականությունը և հրաժարումը կոռուպցիոն

վարքագծի դրսևորումներից: Պետությունը այս խնդիրները լուծելու նպատակով բոլոր հնարավոր միջոցներով պետք է խրախուսի քաղաքացիական կոալիցիաների (միությունների) ձևավորումը, որոնք կներգրավվեն հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտ: Այդ կոալիցիաները պետք է իրականացնեն հետևյալ գործառույթները.

ա. ապահովել իշխանության որոշումների ընդունման թափանցիկությունը,

բ. իրականացնել կոռուպցիայի տարածման, ընդգրկման մասշտաբների ու մակարդակի գնահատման դիտարկումը,

գ. մասնակցել հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների մշակմանը,

դ. իրականացնել հակակոռուպցիոն քննարկումներ և քարոզչություն,

ե. որպես դիտորդներ մասնակցել տարատեսակ մրցույթներ, տենդերներ ու պետական գնումներ իրականացնող պետական մարմինների աշխատանքներին,

զ. որպես դիտորդներ մասնակցել բյուջետային գործընթացներին (սկսած բյուջետային ծրագրավորման, պետական ու տեղական բյուջեների կազմման ու հաստատման փուլերից, վերջացրած դրանց իրականացման գործընթացներով),

է. գնահատել պետական հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման արդյունավետությունը,

ը. հանրային վերահսկողություն սահմանել դատարանների, դատախազության, ոստիկանության և իրավապահ մյուս կառույցների ու ոլորտների նկատմամբ:

Հակակոռուպցիոն պայքարի համատեքստում պետք է դիտարկել ազատ մամուլի և խոսքի ազատության ինստիտուտների կայացման ուղղությամբ քայլերը: Հակակոռուպցիոն պայքարը չի կարող դրական ընթացք և ցանկալի արդյունք ունենալ առանց բազմակարծության դրսևորման և տարածման ազատության: Չանգվածային լրատվամիջոցների բոլոր ձևերի գործունեության բարենպաստ պայմանների ապահովումը այն միջոցն է, որը թույլ կտա հետադարձ կապի միջոցով՝ հասարակական վերահսկողության տակ պահել իրականացվող հակակոռուպցիոն քայլերը և ապահովել դրանց արդյունավետությունը:

Summary

CORRUPTION IN ARMENIA

The Syndrome Recognition of the Systematic Disease

Atom Sh. Margaryan

This paper is about the investigation of one of the global disease syndromes, namely corruption, which has captured the spheres of political, economic, social relations of newly-independent Armenia. Here, the general, theoretical-methodological approaches to corruption as a systematic vice are examined, along with the phenomenon's roots, heritage, its connection with the main events of the past Soviet era and the models of the reforms realized in newly-independent Armenia. The connections and interrelations between corruption and the political system, economy, social system of values and traditional customary factors are being studied; the quantitative evaluation marks of the corruption market are being presented, the scales of this phenomenon's involvement are being explored. In this paper, the thesis is confirmed that corruption has turned into a systematic disease in Armenia: a factor which constrains the development and progress of the country, to overcome the latter large-scale political, institutional reforms, unification of all healthy powers and recourses of the society are needed. Summing up, some working means and mechanisms of fighting against corruption are suggested.

ՉՆԴԵԼՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բ (Ը) ԳՐԱՐԻԿ, ՔԻՊՂ 2(30) ԿԱՍՅԱԿԻ-ԽՈՒՆԻՔԻ 2010

ՎԵՄ ԿԱՄԱԽԱՅԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ